— Դուք չէք ճանաչում, թէ ինչ տեսակ մարդ է Հայրիկը, պարոն, լսեցէք, այդ տեսակ մարդից ո՞վ կը վախենայ, կամ ո՞վ բանի տեղ կը դնի: Երբ պատահում է նրան փաշայի դուռը գնալ, միշտ մենակ է գնում, առանց ծառաների, առանց սպասաւորների, եւ միշտ ոտով: Շատերը նրան չեն ճանաչում եւ փողոցներից անցնելու ժամանակ՝ ընդհարւում են նրան: Փաշայի ծառաներից ոչ ոք նրա առջեւ ոտքի չէ կանգնում, իսկ փաշան խիստ սառն է ընդունում:

— Նրա համար, որ նա միշտ փաշայի կամքին հակառակ է գնում, — ընդմիջեց արհեստաւորը:

Փաշայի անունը անդադար յիշոելով, ես ստիպոեցայ հարցնել.

— Փաշան ի՞նչ տեսակ մարդ է:

Թաղական խորհրդի անդամը, որպէս աւելի պաշտօնական մարդ, պատասխանեց.

— Աստուած նրան երկար կեանք տայ, երբեք նրա նման լաւ փաշայ չենք ունեցել: Այն օրից, որ եկել է, գիտէ՞ք, որքա՜ն մարդիկների կախել է տոել, որքանի՛ ձեռքը, ականջը, քիթը կտրել է տոել, որքանի՛ տունը տեղը այրել է տոել եւ ունեցածը գրաւել է: Թրի ծայրից արիւն է կաթում: Բոլորը սարսափում են, բոլորը դողում են նրանից:

Դարձեա՛լ սարսափ, դարձեա՛լ երկիւղ: Զարմանալի էակներ են մարդիկ, նրանք սիրում են տեսնել ուժ, մինչեւ անգամ կոպիտ, անգութ, բարբարոսական ուժ, որի առջեւ խոնարհոէին, որին պաշտէին: Ես հաւատացած եմ, որ թէ՛ թաղական խորհրդի անդամի եւ թէ՛ եկեղեցու երեցփոխանի հայեացքները բոլորովին անկեղծ էին: Նրանք այդպէս համոզուած էին, թէ այլ կերպ լինել կարող չէր, թէ մարդիկ պէտք է վախենան իրանց իշխանաւորից, որ նրան հնազանդոին, լինէր նա մի հոգեւոր առաջնորդ կամ մի երկրի կառավարիչ: Մինչեւ անգամ աշխատոոր արհեստաւորը, որ մի շատ համակրական մարդ էր երեւում, լռեց, ոչինչ չպատասխանեց թաղական խորհրդի անդամի վերջին խօսքերին: Չգիտեմ, գուցէ նա զգուշացաւ փաշայի դէմ որեւիցէ աննպաստ կարծիք յայտնել: Այսոամենայնիւ, ես աւելի հաւատացի, որ նրանք խորին համոզմունքից էին խօսում, երբ հարցրի.

— Փաշան մարդկանց խեղդել է տալիս, փաշան մարդկանց տները այրել է տալիս եւ ունեցածը յափշտակում է, — դրա համար էլ լաւ՞ փաշայ է:

— Ի՞նչ ասել կուզէ, — պատասխանեց այժմ երեցփոխանը: — Եթէ այդպէս չանէ, նրանից ո՞վ կը վախենայ, ամէնքը գազան կը դառնան եւ միմեանց միսը կուտեն: